

Ռափայել Պատկանյան

Վանեցի կտրիճ

Հազիվ լըրացավ քըսան մեկ տարիս,
Աղվամազ բըսավ երես ու ծնոտիս,
Թըշերես կարմիր վարդեր կըկաթի,
Ջիլերս ամուր՝ ասես երկաթի:

Տվեք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինեն հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կըծամեմ,
Մեջս այդքան ուժ, ասեք, ի՞նչ անեմ...

Իմ պես բյուրերով լի է Հայաստան,

Ընրա սուրբ հողին ըլեմ ես ղուրբան
Մարմինը ուժեղ, առույգ է հային,
Այլ, ափսո՛ս, թմբրած է նորա հոգին:

Թե մի օր զարթի նորա վեհ հոգին,
Նա պարզ կըցուցնե օսմանլի ազգին,

Ո՛վ էր երկուսեն ստրուկ և կամ տեր...
Ա՛խ, ե՞րբ պիտ թնդաք, խեղճ հայի սրտեր:

Յատուկ Ոճեմ